ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
<<ՎԵԴՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ>>
ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ
г.ВЕДИ
ВЕДИНСКИЙ РОДДОМ
ЗАО

ք. Վեդի, Գայի 1 234 2-16-23 << 12>> դեկտեմբերի 2014թ
N 132

ՀՎՀՀ 04104551

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ -11/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/15-2015/2»

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ, ք. Վեդի, Գայի 1, հաշվապահություն, մինչև 2014թ դեկտեմբերի 24-ը, ժամը 10:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գևորգ Ամիրջանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում `ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի շենքում, ք. Վեդի, Գայի 1 հասցեով, հաշվապահության սենյակում, 2014թ. դեկտեմբերի 24-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերումը:

**«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 36 չափաբաժիններից). տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի ամբաժանելի մասը, որի նախագիծը ներակայացված է հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված.

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5). ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն.

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ–ՇՀԱՊՁԲ -11/15» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

*Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:*

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

**«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է` veducnndatun@mail.ru:

*Հարգանքով*